

ԲԱՅՈՒՆԵՐԻՆ


ԵՂԻՊՏՈՍ

Տարեկ. 50 Լ.
վեցամս. 25 "

ԱՐՏԱՍԱՀՄՆ
Տարեկ. 13 ֆր.
վեցամս. 7 "

ԱՍԻՐԻԿԱ
2 Տղ. 30 օէնդ
ԿԱՆԻՍԻԿ

Թիւր 1 Ղրշ. ողջ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Ծանուցումներ
մասնաւոր պայ
մաններով:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
ALEXANDRIE
(EGYPTE)

Թիւր 1 Ղրշ. ողջ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԶԱԽԵՅՏԱԿԱՆ

Է. ՏԱՐԻ

ԴԵԿՏԵՄ. 31 ՀԻՆԴՇԱԲԹԻ 1903

ԹԻԻ 288

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Նոր Բաղդադի պատկերազարդ, Ֆրանսահայ
երկու հասո՛ւ 1874 մեծադիր երեսներով:

Ազգ. — Մասնագիրն փափաքելով որ իր երկասի-
րութիւնն մատչելի եւ օգտակար ըլլայ բոլոր Ազգին, մա-
նաւանդ որ իւր նպատակն է ամենեւին չշահել, այլ փա-
սով իսկ վաճառել, որոշած է որ սոյն երկու հատորնե-
րը ի միասին 25 ֆրանքէն աւելի չարժեն:

Դիմել հեղինակին հետեւեալ հասցեով.

M. G. DE LUSIGNAN

108, Neuilly-sur-Sein. — France

Յանձնարարութիւնք կանխիկ վճարմամբ:
Իսկ Եղիպտոսի մէջ կը գտնուի Օր. Քրիս-
տինէ Գաղապեանի մօտ, վարժուհի ի Գահիրէ:

ԱԶԳԱՅԻՆ

Ի ՆՊԱՍՏ ԶԵԹՈՒՆԻ ԲԱՐԵՍԻՐԱՅԻՆ

Երկու թիւ առաջ ծանուցած էինք որ ահա-
ւոյս ծանօթ վաճառականներէն Տ Արիտաակէս
Ղաղարեան ինքնաբերաբար 10 ֆր. նուիրած էր
«Զեթունի Բարեսիրացոյն» յառաջիկայ ամանորի
և Ս. Ծննդեան այցելութիւններէ ինքզինքը զերծ
համարելու համար, ու փափաղ յայտնած էինք
թէ սոյնօրինակ նուիրատուութիւնն ալ, որ Ե-

ղիպտոսի համար առաջին անգամ տեղի կունե-
նար, իր հետևողներն ունենայ:

Իոհ ենք որ կարգ մը ազնիւ ազգայինք ալ ըս-
կած են իրենց նուէրները զրկել Զեթունի Բա-
րեսիրացին, որու Պատ. Դործ. Ժողովոյ կողմէ
յրկուած հետեւեալ պաշտօնական ցանկերը ուրա-
խութեամբ կը հրատարակենք.

... Խմբագիր.

Շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ նուի-
րատուութիւնները, զորս հաճած են ընկերու-
թեան զրկել այն ազնիւ անձերը որոնք կը փա-
փագին զերծ մնալ յառաջիկայ ամանորի և Ս. Ծը-
ննդեան այցելութիւններէն:

Զեթունի Բարեսիրաց Ընկ. Դործ. Ժողովոյ
Ասեմադպիր Ասեմադպետ
ՍՄ. ԲԻՒՐԱՏ Տ. ԷՆՅԻԷՃԵԱՆ

Յուցակ Ա.

Մեծ. Տեսութ	Ղրշ. ողջ
Գրիգոր Մեղքոնեան	97, 5
Գէորգ Իբէկեան	60
Արիտաակէս Ղաղարեան	40
Պերճ Օհանեան	40
Խոսրով Գույումճեան	40

Յուցակ Բ.

Արթաքի Մեղքոնեան	60
Յ. Մ. Թաշճեան	50
Բարսեղ Օհանեան	40
Միհրան Թեկեան	40

Մեծ. Տեսարժ.	Ղրշ. ողջ
Էտուարդ Թուրչուճեան	97, 50
Սէրժ Սէրաֆ	48, 75
Տօքթ. Էնֆիլէճեան	97, 50
Տօքթ. Թէօֆիլ	40
Մկրտիչ Շատախցեան	40
	790.25

—Ռուս կառավարութիւնը իմացուցեր է Վէհ. Հայրապետին որ առանց մասնաւոր արտօնութեան կովկասի կառավարչին՝ ու է փոփոխութիւն չընէ վանահայրերու կամ առաջնորդներու, ու յետոյ եպիսկոպոս կամ քահանայ չի ձեռնադրէ:

—Պոլսոյ մէջ շինուելիք Գարակէօղեան Ուրբանոցին իբրեւ կալուած Բերայի Օթէլ Խտիվիալը գնուեր և փոխանցման գործողութիւնը կատարուեր է, նոյն կալուածը վագրֆ է եղեր հիմնուելիք որբանոցին, միւթէվէլլի կարգուելով Պոլսոյ օրուան Պատրիարքը:

—Գարբիէլ էֆ. Էլիկիւզէլեան իր անձը 1000 անգլ. ոսկիի ապահովագրած է անգլիական ընկերութեան մը, ու կտակած է որ նոյն գումարը իր մահուանէն վերջ յատկանայ Հայ որբանոցի մը, միւթէվէլլիութեամբ օրուան Պատրիարքին:

—Ռուսները առաջնակարգ վաճառականներէն Մեծ. Տիար Ս. Գուլումճեան՝ իւր ամեն տարուան բարի սովորութեանը համաձայն այս տարի ալ 200 ֆր. նուիրեր է աղքատիկ ուսանողաց հագուստ շինելու համար:

—Լսածնուս նայելով, ատենէ մը ի վեր տեղւոյս վարժարանաց հոգաբարձութեան և տնօրէնին միջև բեռնական սառնութիւն մը կը տիրէ եղեր, զոր հալեցնելու համար Ս. Առաջնորդը Գահրէէն առաջի՛ ճեպընթացով հոս հասեր է:

Մաղթենք որ Սրբազանը գոնէ այս ձեռնարկին մէջէն յաջող դուրս ելլայ:

—Յաւօք սրտի կը լսենք թէ տեղւոյս Ազգ. երկսեռ վարժարանի աղքատիկ տղայոց յատկացուած օրական 20 փարայ ողջի սնունդը կէս առ կէս կտրուած է... պիւտճէի նեղութիւնը պատճառ բռնուելով: Որչափ որ դիտենք, ամսական 600 զրուշի ծախքով մը կըլլար այս նպաստը. եթէ պիւտճէն իրօք նեղ է, ի՞նչպէս ուրեմն կէս տուչինա վարժուհիները կը պահուին, որոնք քիչ բացառութեամբ, բոլորովին աւելորդ կը նշկատուին: Որքա՛ն ցաւ է մեզի որ այսքան չնչին ծախք մը չընելու համար մեր մատաղ աղքատիկ սերունդը կը զրկուի կենսական անհրաժեշտ սնունդէն, (մէկ օխա հացը 16 տղու կը բաժնուի եղեր) մինչդեռ անդին չենք գիտեր ի՞նչ խըղճով պօ՛ղ պօ՛ղ ամսականներ կը տրուին մէկէ աւելի անպէտ պաշտօնեաներու:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Դեկտ. 28 թուականաւ Պոլսէն առնուած հեռագրի մը նայելով, Աւստրիոյ և Ռուսիոյ դեսպանները նոր խիստ ծանուցագիր մը տուած են Բ. Դրան, պնդելով բարենորոգումներու գործադրութեան վրայ:

—Փեքինի Ռուս դեսպանը իմացուց Զինուարտաքին գործոց նախարարին թէ՛ առայժմ որ և է միջոց չկրնար ձեռք առնել Մանչուրիան պարպելու:

—Ռուսական երկու ընկերութեանց ապրուած է մէկ մէկուկէս միլիոն ռուպլի ալիւր յանձնել կառավարութեան մինչև յունվարի վերջ:

—Բորթսմութի մէջ (անգլիա) Ծայրագոյն Արևելքի նաւատորմի զվարկեանէ վարկեան կը պատրաստուի ճամբայ ելնել: Ծովային նախարարութիւնը նաւային պահեստի զինուորներուն հրամայած է սուաջին հեռագրական կոչումին պատրաստ գտնուիլ: Ծիշդ ասոր նման հրաման մը տրուած էր Թրանսվալի պատերազմին սկիզբը:

—Ռուսո—Ճաբոնական պատերազմը ծագելու պարագային՝ մէկ քանի տէրութեանց հետե-

ւելիք ընթացքի մասին սապէս կը գրէ Տէյլի—
Մէյլ անգլիական կարեւոր թերթը. «Չինացիք
ուզեն չուզեն պիտի մասնակցին. սակայն կե-
րեայ թէ սոյն մասնակցութիւնը իրենց ետեւէն
պիտի ձգէ Թրանսայինը ի նպատակով Ռուսիոյ. ու
ասոր իբր հետեանք՝ Մեծն Բրիտանիոյ պիտի մի-
ջամտէ ի նպատակ ճարտնի» (Վաղը բնականաբար
պիտի իմանանք թէ ի՞նչ գիրք պիտի բռնեն Ա-
մերիկա, Իերմանիոյ և միւս տէրութիւնները.
Ո՞ր մնաց Չարին ստեղծած Լոհէի խաղաղու-
թեան վեհաժողովը ? ? ? :

Բոժ. — Ես այն ատենէն ըսած էի որ այդ
ժողովը պօռո՞ւ էր, պօռո՞ւ :

— Պուտաբէշթի (Հունգարիա) խորհրդարա-
նին մէջ և նախարարը յայտարարեց որ Աւստ-
րիա ստիպուած է կազմ և պատրաստ գտնուիլ
առաջիկայ դարնան անխուսափելի եղող թուրքո-
պուլկարական պատերազմին հանդէպ :

— Պուլկար կառավարութիւնը որոշեց է 18-
30 տարեկան գաղթական երիտասարդները ինչ
ազգէ ալ որ ըլլան զինուորագրել. այս որոշման
չի համակերպուները պէտք է դուրս ելնեն Պուլ-
կարիայէն :

— Ռուսական և ճարտնական նաւատորմիդ-
ները կը բաղկանան հետեւեալ նաւերէ .

Ռուսական — 7 նոր ձեով մարտանաւ. 2 զը-
րահապատ, 9 պաշտպանողական զրահապատ և
35 թորբիւտ.

Ճարտնական — 6 մարտանաւ, 6 զրահապատ,
16 պաշտպանողական և 70 թորբիւտ.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՕԹԵՐ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԺՆՈՐՅՔԵԱՆ

Յովհաննէս Շնորհքեան, ջերմ սահմանադ-
րական, օրինասէր, գրեթէ օրինամոլ մարդ, Մե-
ծագոյն դերը ունեցած է Ալեքսանդրահայոց թա-
ղական թատերգութեանց մէջ : Պողս առաքեա-
լին տեսակետով ամէն չարեաց աղբիւրը արծա-

թասիրութիւնն է, բայց Շնորհքեանի տեսակե-
տով ամէն չարեաց աղբիւրը հակասահմանադրա-
կանութիւնն է . . . Սահմանադրութեան վրայ այն
հաւատքը ունի, ինչ հաւատք որ ունին Ժէօն
Թիւրքերը իրենց Բաճուրձի Էյսաիին վրայ, Թէեւ
գործի մարդ է, Սահմանադրութեան նոր բա-
րեւ տուած չէ բնաւ. (ականջդ խօսի, Օտեան),
այլ միշտ հին բարեւ կ'ուտայ Սահմանադրութեան,
այն անկեղծ, միամիտ հին բարեւ . . .

Շնորհքեան անոնցմէ է որք եթէ չեն կար-
ծեր ալ նէ այնպէս կըզգան թէ օրէնքին հեղի-
նակը սխալական մարդը չէ և թէ օրէնքը մար-
դէն առաջ գոյութիւն ունեցած է. իրեն համար
ցուալի բանը գործուած չարիքը չէ, այլ չարի-
քին օրէնքէ դուրս գործուիլն է : Օրինակ մը կը
լուսաբանէ օրէնքի վրայ ունեցած իր հաւատքը .
Անգամ մը հիւանդի մը տէրը բժշկին իմաց կու-
տայ թէ իր խնամած հիւանդը մեռաւ. «էհ, կը
պատասխանէ բժիշկը, գոհ չըլլա՞ք որ հիւանդ-
նիդ բժիշկի ձեռք մեռաւ . . . » Եւ իրողութիւնը
այն է որ օրէնքով ալ այնքան չարիք գործուած
են որքան ապօրէնութեամբ. իր մականունը չը
նմանիր այն մականուններուն որ չեն համապատաս-
խաներ իրենց տէրերուն, ինչպէս օրինակի համար
Շիշմանեան կոչուիլը նիհար մարդու մը, ընդհակա
ռակը շնորհքով մարդ մըն է Շնորհքեան, մի-
այն թէ զինքը շողքորթած չըլլալու համար ը-
սեմ նաեւ թէ կամայական բան մը կայ իր բնու-
թեան մէջ, թէեւ կամայականութեան մեծագոյն
թշնամին հանդիսացած է ինքը : Բայց այստեղ
զարմանալու բան չկայ. «Մեծն Պետրոս ինքը վայ-
րենի մը ըլլալով՝ վայրենի ժողովուրդ մը մը քա-
ղաքակրթեց կըսէ Վօլթէն : Ուրեմն անկարելի չէ
որ Շնորհքեան ալ ինքը կամայական ըլլալով
կամայականութիւնը բառնայ մեր խնամակալնե-
րէն :

Քալած ատենը՝ իր երեւոյթը այն մարդուն
երեւոյթն է՝ որ կըսէ իր շուրջը գտնուողներուն,
«Ի՞նչ կուզէք ինձմէ» :

— Կամայականութեան բարձուժը, Տիար Շը-
նորհքեան :

Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԳՐԱԴԱՏԱԿԱՆ

«ՀԱՆՃԱՐԸ»

Վերկթոր Հիւկօ, ինքը մեծ հանճար մը ըլլալով, երբ կը գրէ հանճարի վրայ կրնաք երեւակայել թէ ատիկա ինչ հրաշալի գրուածք մը կըլլայ:

Այդ հրաշալի գրուածքը կարգացի «Պարտէզ»-ի մէջ:

Գուցէ հարցունէք թէ ինչէ՞ն հասկցայ որ հրաշալի է այն. Անկէ հասկցայ, որ նախ գրողը Հիւկօն է, եւ երկրորդ որովհետեւ... բան մը չը հասկցայ:

«Է, պիտի ըսէք նորէն, չհասկցար նէ ինչէ՞ն գիտես որ հրաշալի է»:

Ձհասկցայ, անկէ գիտեմ որ հրաշալի գրուածք մըն էր: Միթէ հրաշքները կը հասկցուին:

Մարդս որքան ալ զարգացեալ ըլլայ իր մէջը միշտ կը մնայ կնոջական եւ տղայական բնոյթը, նախ որովհետեւ կնիկէ ծնած է, եւ երկրորդ՝ որովհետեւ ինքն ալ տղայ եղած է:

Վարդապետութիւններ ունինք՝ որոնց՝ եթէ հասկցած ըլլայինք պիտի չտայինք այն տեղը եւ այն բարձրութիւնը զոր տուած ենք: Միթինը, խրթինը, անհասկանալին ապաքէն միշտ գերազանցութիւն մը եւ հմայիչ բան մը ունին պարզին ու մեկինին քով:

Փորձ մը ըրէք:

Երկու հոգի խօսք մէկ ըրէք, նստեցէք դէմ դէմի եւ շինծու բառերով իրարու հետ խօսեցէք փոխն ի փոխ ինչպէս, «թեխա պիճի քաֆն մօճա շիջօ քաւիւս» եւայլն, եւ այսպէս շարունակեցէք որքան որ կրնաք յարմարցունել, գիտցէք որ անպատճառ ձեզ մտիկ ընողները պատկառանք մը պիտի զգան ձեր քով եւ պիտի խորհին ու կարծեն թէ դուք հմուտ չեզուագէտներ էք տեղեակ նոյն իսկ ամենէն անձանց թմայած լեզուի մը:

Վերջապէս անհասկանալիները աւելի հրապուրիչ են քան հասկանալիները, ինչպէս որ իր ֆիզիքական շնորհը ծածկող կին մը աւելի կը հետաքրքրէ զմարդիկ քան թէ զայն ցոյց տուողը, եւ եթէ կանացի սքողումը երբեմն չափա-

զանցութեան կերթայ, պատճառը այն է որ կիները արարածոյ էն խորամանկներն են, այդ բնութիւնը ստացած ըլլալով դրախտաբնակ օձէն: Բայց ի զուր շատ մը գրողներ բանեցունելով այդ խորամանկութիւնը անհասկանալի բաներ կը գրեն ուշադրութիւն գրաւելու համար: Եթէ Հիւկօյի առաջին երկերը «Հանճար»-ին պէս բաներ ըլլային, գրաւ կը դնեմ որ անյաշողներուն շարքը կը մնար ինքն ալ: Պէտք է որ մարդ մը առաջ անուն մը չինէ, այնուհետեւ սկսիլ այսօրինակ գրուածքներու, այն ատեն ատելի հետաքրքրութիւն կը գրաւէ:

Միթէ անունը կը կարծէք թե քիչ ազդեցութիւն կընէ մարդոց մտքին վրայ:

Փորձ մը ըրէք:

Գրեցէք անհամ, անլի, անկապ ու անիմաստ բան մը, ստորագրեցէք մեծ գրողի մը անունը, տուէք մէկու մը որ կը կարծէք թէ քիչ շատ բան մը գիտէ, ապահով եղիք որ պիտի ըսէ կարգաւորով զայն:

—Աքանջելի է:

Գրեցէք մեծ գրողի մը իսկապէս երեւելի մէկ հատուածը, ստորագրեցէք օրինակի համար, «Կիրակոս Թուրամպաճեան», եւ տուէք ձեր բանգէտներէն մէկուն, ապահով եղիք որ իսկոյն պիտի գոչէ կարգաւորով... ստորագրութիւնը:

—Աս ինչ լրբունկ բան է:

Այս տողերը կարգաւորով գուցէ կարծէք թէ Վերկթոր Հիւկօն կը քննադատեմ. Քաւ լիցի. Հիւկօն չէ որ կը քննադատեմ, այլ մարդկային նախապաշարումը, թէեւ մարդիկ ոչ թէ Հիւկօնները այլ Աստուածներն իսկ քննադատած են, Հիւկօ մը, վերջապէս, ուրիշ բան չէ բայց եթէ դրական աշխարհին մէկ հարուստը կամ մեծատունը, էհ, միթէ՞ հարուստ ըլլալու է մարդ հարուստ մը քննադատելու համար, կամ միթէ Չարերն են անոնք որ Չարը կը քննադատեն: Բայց՝ այո՛, «մարդեր են հանճարները» եւ երբեմն սըլալելով կը դատարկաբանեն, եւ թէեւ խոտեր են բանջարները բայց անոնցմէ շաքար կը հանեն...

Ս. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՐՈՆԻԿ

Գահիրե 29 Դեկտ. 1903

Անցեալ ուրբաթ օր գեղեցիկ անակնկալ մը ունեցանք ի Գահիրէ: Ժամը 11ին երբ շոգեկառքը կայարան կը մտնէր, ուր արգէն խել մը ազգայինք անհամբեր կ'սպասէին, նոյն շոգեկառքէն ելլող Աղեքսանդրիոյ Հայ նուագախումբը խտրական մարշով քաղաքը կ'ողջունէր:

Սոյնխումբը որ մինչև էօզյսէֆիէի պարտէզը յառաջացաւ միշտ նուագելով, իրեն հետևող ամէն ազգէ խումբն բազմութեան հիացումին ու վիպանքուն կ'արժանանար:

Նոյն իրիկունը էօզյսէֆիէի թատրոնին մէջ ամենափայլուն կերպով ներկայացուեցաւ «Միսք փողոցի ոճիրը» թատերախաղը. երկու խումբերն ալ որոշունքստ ծափերու և կեցցէներու արժանացան. նոյնպէս ծափերու և կեցցէներու արժանացաւ տեղւոյս «Քնար» նուագախումբը որ ի պատիւ երկու խումբերու, միջնարարներուն ընտիր կտորներ նուագեց:

Թատրոնը լեցումով ըլլալով, շատեր տեղ չգտնելուն պատճառաւ ստիպուեցան ետ դառնալ թատերասէր հասարակութիւնը ա'յնքան զոհ մընայ որ եթէ հետևեալ շաբաթ կամ կիրակի իրիկուն պարապ թատրոն մը գտնուէր, երկրորդ ներկայացում մ'ալ պիտի տրուէր:

Շաբաթ և կիրակի իրիկուններ Աղեքսանդրիոյ Հայ նուագախումբ խումբը Քաֆէ Շիշայի մէջ նուագելով, լաւ ժամանց մը ընել տուաւ ներկայ եղողներուն. իսկ կերակի ցորեկ, երկու խումբերը ի Հելվան Տիար Գրիգոր Մաթաֆեանի կողմէ հրաւիրուելով, հոն ի յարգանս իրենց պատրաստուած ճոխ սեղանը վայելէ վերջ տեղւոյն ամեն ազգէ ժողովուրդն ալ գոհացուցին՝ մէկ քանի ընտիր կտորներ նուագելով:

Երկուշաբթի առաւօտ երկու խումբերը ճըպընթացով մեկնեցան Աղեքսանդրիա, խառնանալով մօտ օրէն աւելի փայլուն ներկայացումով մ'ալ պատուել Գահիրէի թատերասէր հասարակութիւնը, որու անհամբեր սպասողներէն մին է:

Արամայիս

Ծ Ի Ծ Ա Ղ

Լեզուամուլ մը որ հիւանդ ինկած էր, այն ինչ նոր լեզու մըն ալ սորվել սկսեր էր, կը լըսէ թէ բժիշկը իրեն համար «վեց ամիս չապրող» ըսած է:

— Էհ, հոգս, կըսէ, մինչև այն ատեն Գերմաներէնս կը սորվիմ:

Երեսունը անցած ազնիկ մը իր ընկերուհւոյն կըսէր:

— Երեսունի մօտենալուս համար շատ կը ցաւիմ:

— Բայց խուշո, հոգ մի՛ ըներ, ամեն օր անկէ հեռանալու վրայ ես:

Երկու Ակնցիներ Մէնչիէի հրապարակը կառքի մը տակ պիտի ետթալին:

Արար կառապանը կը գոչէր:

— Էմինէք, (գէպ ի աջ դացէք)

— Հաճի պէկ, աս հիւրիքը ի՞նչ կըսէ ուր:

— Ի՞նչ տի ըսէ էֆենտըմ, էմինէք, եանի պահսով էք կըսէ:

— Վա՛յ շան որդի, կու հայի՞ս մի աղա, կաթնավերը քիչ մնաց մեկ չիյնէմիշ տի անէր, մայէթինտէ ալ քնթերնուս կու լսնդայ ու էմինէք կըսէ:

Ա Ձ Դ

Արեւելեան համադարձ կերակորներ, մաքրութիւն եւ գիւնեռու յարստութիւն:

Քաղաքիս Մէնչիէի հրապարակը Սէյֆետին պէյ բասաթին մէջ՝ կարապետ Տիրհէմէտի Արեւելեան ճաշարանը՝ վերջերս կրած նորանոր փոփոխութիւններով կատարելագործուած է:

Արեւելեան համադարձ կերակուրներէ ախորժող փափկաճաշակներուն կը յանձնարարենք որոշ ճաշարանը որ ամեն կերպով կը մրցի նմանօրինակ հաստատութիւններու հետ:

Եւրոպացիք իրենց ճաշարանները կը հօգան, պէտք է մենք ալ մերինները հօգանք:

Շնորհակալություն

Ի դիմաց Ազեքսանդրիոյ Հայ Դերասանական եւ Նուագածուաց խումբերու, անօրէնութիւնըս կը փութայ հրապարակաւ իր խորին շնորհակալութիւնը յայտնել Գահիրէի ազնիւ տղգայնոց որոնք իրենց գնահատելի ընդունելութեամբը պատուեցին սոյն երկու խումբերը .

Ռեժիսէօն

Տնօրէն

Լ. ՇԻՇՄԱՆԵԱՆ

Յ. ՂԱԶԻԿԵԱՆ

ՏԵՆԵՐԻՔ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ .

Պուրլար Ռամէ

Երեքշաբթի օրը, ժամը 2ին, Բիրամիտ թատրոնի պարտէզին մէջ իր մէկ բարեկամը տեսնելու համար ժամադրող Օրիորդ Ս... բաւականատեն իր արգելադրողը զբաղելէն ուշ մնալուն անելոյն զլիարկը Թէրս դրած փողոց ելաւ .

Քանթօ

Որոշեալ ժամուն նոյն պարտէզը գտնուելու համար ածապարող թեզկեանհար միւսին ալ ճամբան զինքը նեղացնող բառերսին հանելու ատեն գրպանէն սիրահարական ճիւղէր-կտրտուկ տեսակէն նամակներու ծրար մը ինկաւ որ ըստ օրինի յանձնուեցաւ Պ. Բոժոժիկի նկատառմանը .

Բոժ. — Պիտի տեսնուի՞նք այդ նամակներուն հետ .

Մեծ կայարան

Մենշիկէն թրամվայ նստելով Աքքարին երթալ ուզող ընտանիքի տէր 45նոց ճանիչ հայ մը նոյն կառքին մէջ գտնուող Իտալուհի մը հետ անձայն հեռագիր փոխանակելով զբաղելուն, երբ կայարան հասաւ, քովը դրած օխաուկէս լեմբիկ ձուկին համբարձի եղած ըլլալը տեսնելով, բերանը խառնջ մը բաց մնաց .

Բոժ. — Զուկին վրայ քամելիք իլիմոնն ալ չեւքը մնաց .

ՏՊԱՐԱՆ



«Հայելի»ի սպարանին մէջ դիրամասցելի գնով կը սպագրուին առեւտրական տներու համար ամեն յեղուէ՝ Բարիգեան վերջին դրոքեւաք հետաքրքրաշարժ, պատկերագար եւ գունաւոր փոքրիկ ազդարարութիւններ. կը սպագրուին նաեւ այցելման, հասցէտուն, հարսանեկան հրաշագիր մահազդ, նամակագրոյս, պահարան, տնասկ. եւն Ուրիշ քաղաքներէ եղած յանձնարարութիւնք ալ փութով կը կատարուին .

ՅԱԿՈԲ ԴԱՐԱԿԷՕԶԵՍՆ

Սուգ-էլ-Աքքարին

Կը ծանուցանէ իր յարգոյ յաճախորդաց թէ ինչպէս ուրիշ տարիներ, այս տարի եւս յաւկայեւ թերեւ տուած է Զինական, Հնդկական եւ Սէյրանի ընտիր եւ հոտաւէս թէյեր, որոնց գործածութիւնը ներկայ եղանակիս մէջ շատ օգտաւար է .

Կը վաճառէ նաեւ մազի համար ընտիր ներկեր ամեն գոյնէ . Դիմերը յարաւոր .

Հետեւեալ գիրքերը կը ծխառին Տիար Կարապետ Աստուածատի ֆոյ . Եէրիք բաշա .

Փիլիկ Աղբօր Հարսնիք	դր. 1,50
Այիկէի Լեթայիք. հայաստ. եւ քրքարաւ գումարձալիքներ	8 " "
Իրպանի Երագանան .	50 սնդակ
Իսպանի Դօնա, գօմէսի	20 փրշ
Մանուկիքի Միսեւաւաք	20 " "

ԱՇՈՏ ՓԱԼԱԵԱՆ

Տպագրական ամեն տեսակ գործերու կաշուանիս, փորագրիչ, թէ տուախի եւ թէ պղինձի վրայ, կը պատրաստուին նաեւ վաճառականական կնիքներ՝ մեծադէ եւ փառլոն .

Աղեքսանդրիա, Ֆրանս փողոց թիւ 22